



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

2017թ. ապրիլի 25

N 54 - Ա

ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի «դ» ենթակետի և 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2017 թվականի ապրիլի 21-ի N 01/13/1/1012-17 գրությունը և Կ.Առաքելյանի 2017 թվականի ապրիլի 25-ի դիմումը՝ **հրամայում եմ**.

1. 2017 թվականի ապրիլի 25-ից Կարապետ Արարատի Առաքելյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի առաջատար մասնագետի /ծածկագիր 61-3.2-19/ ժամանակավոր թափուր պաշտոնում նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև հիմքի վերացումը:

2. Աշխատավարձը՝ մարզպետարանի հաստիքացուցակի համաձայն:

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ